թոռ Պատրիարքութեան Դաւիթ եպիսկոպոս գործակից և վատակակից նմին, և միաբան Ս. Աթոռոյն։ Յաւուրս սորա 'ի յորդել անձրեւաց տարւոյն, անկան արեւելեան և հարաւային որմքն Ս. Փրկչի վանաց, և որմն պարսիզի Հրեշտակապետի վանաց, և տուն մի կից նմին, իսկ Դաւիթ Պատրիարք առեալ հրաման 'ի դատաւորէ քաղաքին շինեալ նորոգեաց զնոսա, ՉՍՍ (1580)։

Այլազգիք Երուսաղէմի դարձեալ բռնացան 'ի վերայ ազգին Հայոց, եւ արգելին զնոսա 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի, և խափանեցին զհոգեւոր պաշտամունս նոցին։ Եւ 'ի լինել բանից 'ի վերայ այսր 'ի մէջ Խաչատուր եպիսկոպոսի և այլազգեաց, յայտ արարին նոքա զմեծագումար պահանջումն իւրեանց. իսկ Խաչատուր չկամելով ունկն մատուցանել բանից նոցա, առ ընդ իւր Փիլիպոս կամ Բանոս եպիսկոպոս զոմն, և գէմ եղեալ զնոցա 'ի Թագաւորեալ քաղաքն եւ մատուցեալ գիր աղաչանաց 'ի Դուռն արքունի, յայտ արար զբռնութիւնս այլազգեաց թէ՝ ո՛րպէս զրկեցին զՀայս 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի. եւ խափանեցին զհոգեւոր պաշտամունս նոցա, զոր կատարէին յաւուրց անտի մեծին Օմարայ։ Գրեցաւ հրովարտակ առ այս և պատուեր առ դատաւորն Երուսաղէմի 'ի չարիս ունել զստահակութիւնս այլազգեաց. եւ տալ կատարել զպաշտամունս ըստ սովորութեան, և զանհնազանդսն հրամանին՝ ծանուցանել 'ի Դուռն, ՉՂՓ (1584)։

Թարգման վանաց Ս. Յակոբայ Յակոբ որդի Մովսէսի, հրամանաւ դատաւորին շինեալ բարձրացոյց զբոլորակ որմն շուրջանակի պատուհանին 'ի վերայ տանեաց տաճարին Ս. Աստուածածնի, 'ի զգուշութիւն մանկանց և անասնոց. կի մի պատահեսցի վտանգ ինչ. և մի հեղեղք անձրեւաց հոսեսցին 'ի ներքս 'ի տաճարն, ՉՂԷ (1585)։

Այլազգիքն յօրէ յորմէ յափշտակեալ զվանս Սիոնի բընակեցան անդ, ոչ երբէք դադարէին հասուցանելոյ չարիս միաբանաց որք էին 'ի վանս Ս. Փրկչի։ Զի 'ի սմին ժամանակի դուռն վանաց էր 'ի կողմն հարաւոյ յանդիման դրան Սիոնի։ Իսկ Դաւիթ Պատրիարք կամելով զերծանիլ 'ի նեղութենէ և 'ի բռնութենէ նոցին, առաքեաց առ դատաւոր քաղաքին զԹարգման իւր զՅակոբ և յայտ արար